



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ**

N 359 - Ա

05 դեկտեմբերի 2017 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ  
ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ N 4  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգ»-ի 9-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջները

**որոշում եմ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N 4 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐ



ԿԱՐԵՆ ԲՈՒԹՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

**ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի Հայաստանի Հանրապետությունում  
ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների  
կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների  
ընտրության մարզային մրցութային հանձնաժողովի**

**01 դեկտեմբերի 2017թ.**

**ք. Գավառ**

2017 թվականի դեկտեմբերի 1-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում  
ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների  
կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության  
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի մարզային մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝

Քարտուղար՝

Անդամներ՝

Կ. Հակոբյան

Գ. Խաչատրյան

Կ. Բաղդասարյան

Գ. Գրիգորյան

Լ. Գևորգյան

**Օրակարգում**

1. Ներմարզային Գավառ(Ա/Կ) - Սևան(Ա/Կ) - Գավառ թիվ 13,  
Մարտունի(Ա/Կ) - Արծվանիստ - Մարտունի թիվ 22, Մարտունի(Ա/Կ) - Վարդենիկ -  
Մարտունի թիվ 24, Մարտունի(Ա/Կ) - Գեղիովիտ - Մարտունի թիվ 26,  
Մարտունի(Ա/Կ) - Մադինա - Մարտունի թիվ 27, Վարդենիս(Ա/Կ) - Կարճաղբյուր -  
Վարդենիս թիվ 38 ավտոբուսային և Սևան(Ա/Կ) - Սեմյոնովկա - Սևան թիվ 15,  
Սևան(Ա/Կ) - Գեղամավան - Սևան թիվ 16, Սևան(Ա/Կ) - Գագարին - Սևան թիվ 17,  
Մարտունի(Ա/Կ) - Ծովինար - Մարտունի թիվ 23 միկրոավտոբուսային երթուղիների  
սպասարկման ժամկետները երկարաձգելու մասին:

2. Մարտունի(Ա/Կ) - Գեղիովիտ - Մարտունի թիվ 26 ներմարզային  
ավտոբուսային երթուղու պահուստային ավտոբուսը փոխարինելու մասին:

3. Գավառ(Ա/Կ) - Կարմիրգյուղ - Գավառ թիվ 6, Մարտունի(Ա/Կ) -  
Ձորագյուղ - Մարտունի թիվ 30 և Մարտունի(Ա/Կ) - Երանոս - Մարտունի թիվ 31  
ներմարզային ավտոբուսային երթուղիները թափուր հայտարարելու մասին:

**Քննարկվեց**

1. 2017 թվականի դեկտեմբերի 7-ին լրանում են ներմարզային Գավառ(Ա/Կ) -  
Կարմիր - Գավառ թիվ 6, Գավառ(Ա/Կ) - Սևան(Ա/Կ) - Գավառ թիվ 13,  
Մարտունի(Ա/Կ) - Արծվանիստ - Մարտունի թիվ 22, Մարտունի(Ա/Կ) - Վարդենիկ -  
Մարտունի թիվ 24, Մարտունի(Ա/Կ) - Գեղիովիտ - Մարտունի թիվ 26,  
Մարտունի(Ա/Կ) - Մադինա - Մարտունի թիվ 27, Մարտունի(Ա/Կ) - Ձորագյուղ -  
Մարտունի թիվ 30, Մարտունի(Ա/Կ) - Երանոս - Մարտունի թիվ 31, Վարդենիս(Ա/Կ)  
- Կարճաղբյուր - Վարդենիս թիվ 38 ավտոբուսային և Սևան(Ա/Կ) - Սեմյոնովկա -  
Սևան թիվ 15, Սևան(Ա/Կ) - Գեղամավան - Սևան թիվ 16, Սևան(Ա/Կ) - Գագարին -  
Սևան թիվ 17, Մարտունի(Ա/Կ) - Ծովինար - Մարտունի թիվ 23

միկրոավտոբուսային երթուղիների, սպասարկման ժամկետները: Անհրաժեշտությունից ելնելով առաջարկվում է ղեկավարվելով << կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին>> թիվ 762 որոշման 62-րդ կետի պահանջներով, մինչև նոր մրցույթների անցկացումն ու դրանց արդյունքների ամփոփումը լիազորել՝

ա) <<Գավառտրանս>> ՍՊԸ ժամանակավորապես իրականացնել ներմարզային Գավառ(Ա/Կ) – Սևան(Ա/Կ) – Գավառ թիվ 13 ավտոբուսային երթուղու սպասարկումը՝ նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած տրանսպորտային միջոցներով:

բ) <<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲԸ ժամանակավորապես իրականացնել ներմարզային Մարտունի(Ա/Կ) – Արծվանիստ – Մարտունի թիվ 22, Մարտունի(Ա/Կ) – Վարդենիկ – Մարտունի թիվ 24, Մարտունի(Ա/Կ) – Գեղիովիտ – Մարտունի թիվ 26, Մարտունի(Ա/Կ) – Մադինա – Մարտունի թիվ 27 ավտոբուսային և Մարտունի(Ա/Կ) – Ծովինար – Մարտունի թիվ 23 միկրոավտոբուսային երթուղիների սպասարկումները՝ նախկին մրցույթներով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած տրանսպորտային միջոցներով:

գ) <<Ա.Ա.Ա. ՏՐԱՆՍՍԵՎ>> ՍՊԸ ԲԲԸ ժամանակավորապես իրականացնել ներմարզային Սևան(Ա/Կ) – Սեմյոնովկա – Սևան թիվ 15, Սևան(Ա/Կ) – Գեղամավան – Սևան թիվ 16 և Սևան(Ա/Կ) – Գազարին – Սևան թիվ 17 միկրոավտոբուսային երթուղիների սպասարկումները՝ նախկին մրցույթներով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած տրանսպորտային միջոցներով:

դ) <<Շամա տրանս>> ՍՊԸ ժամանակավորապես իրականացնել ներմարզային Վարդենիս(Ա/Կ) – Կարճաղբյուր – Վարդենիս թիվ 38 ավտոբուսային երթուղու սպասարկումը՝ նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած տրանսպորտային միջոցներով:

2. <<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲԸ տնօրենի գրության համաձայն առաջարկվում է Մարտունի(Ա/Կ) – Գեղիովիտ – Մարտունի թիվ 26 ներմարզային ավտոբուսային երթուղին սպասարկող ՊԱԶ-672Մ մակնիշի 260ՍՏ16 պետհամարանիշի /10-48Լ դեղին հիմնագույնի համարանիշ/ 1986 թվականի արտադրության ավտոբուսը տեխնիկապես անսարք լինելու պատճառով հանել երթուղու սպասարկումից, որի փոխարեն երթուղու սպասարկման գործում ներգրավել ՊԱԶ-32054 մակնիշի 34FU912 պետհամարանիշի 2005 թվականի արտադրության ավտոբուսը: Սահմանված կարգի համաձայն կատարվել է ներկայացված տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի գնահատում: Ավտոբուսը ստանալով 60 միավորից բարձր գնահատական ապահովել է նաև երթուղու հնարավորի (առանց լրացուցիչ միավորների) 70%-ից բարձր միջին գումարային միավոր:

Առաջարկվեց՝ հիմք ընդունելով << կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 9-րդ կետի 10-րդ ենթակետի, 69-րդ կետի 2-րդ ենթակետի և 71-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները <<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲԸ թույլատրել կատարելու առաջարկված փոփոխությունը:

3. <<Գավառտրանս>> ՍՊԸ և <<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲԸ տնօրենների գրությունների համաձայն կազմակերպությունները հրաժարվում են համապատասխանաբար Գավառ(Ա/Կ) – Կարմիրգյուղ – Գավառ թիվ 6 և Մարտունի(Ա/Կ) – Ձորագյուղ – Մարտունի թիվ 30, Մարտունի(Ա/Կ) – Երանոս – Մարտունի թիվ 31 ներմարզային ավտոբուսային երթուղիների սպասարկման ժամկետի երկարաձգումից:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է Գավառ(Ա/Կ) – Կարմիրգյուղ – Գավառ թիվ 6, Մարտունի(Ա/Կ) – Ձորագյուղ – Մարտունի թիվ 30 և Մարտունի(Ա/Կ) – Երանոս – Մարտունի թիվ 31 ներմարզային ավտոբուսային երթուղիները հայտարարել թափուր:

**Հանձնաժողովի որոշեց՝**

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 62-րդ կետի պահանջները՝ մինչև նոր մրցույթների անցկացումն ու դրանց արդյունքների ամփոփումը լիազորել՝

ա) <<Գավառուրանս>> ՍՊԸ ժամանակավորապես իրականացնել ներմարզային Գավառ(Ա/Կ) – Սևան(Ա/Կ) – Գավառ թիվ 13 ավտոբուսային երթուղու սպասարկումը՝ նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած տրանսպորտային միջոցներով:

բ) <<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲԸ ժամանակավորապես իրականացնել ներմարզային Մարտունի(Ա/Կ) – Արծվանիստ – Մարտունի թիվ 22, Մարտունի(Ա/Կ) – Վարդենիկ – Մարտունի թիվ 24, Մարտունի(Ա/Կ) – Գեղիովիտ – Մարտունի թիվ 26, Մարտունի(Ա/Կ) – Մադինա – Մարտունի թիվ 27 ավտոբուսային և Մարտունի(Ա/Կ) – Ծովինար – Մարտունի թիվ 23 միկրոավտոբուսային երթուղիների սպասարկումները՝ նախկին մրցույթներով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած տրանսպորտային միջոցներով:

գ) <<Ա.Ա.Ա. ՏՐԱՆՍՍԵՎ>> ՍՊԸ ԲԲԸ ժամանակավորապես իրականացնել ներմարզային Սևան(Ա/Կ) – Սեմյոնովկա – Սևան թիվ 15, Սևան(Ա/Կ) – Գեղամավան – Սևան թիվ 16 և Սևան(Ա/Կ) – Գազարին – Սևան թիվ 17 միկրոավտոբուսային երթուղիների սպասարկումները՝ նախկին մրցույթներով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած տրանսպորտային միջոցներով:

դ) <<Շամա տրանս>> ՍՊԸ ժամանակավորապես իրականացնել ներմարզային Վարդենիս(Ա/Կ) – Կարճաղբյուր – Վարդենիս թիվ 38 ավտոբուսային երթուղու սպասարկումը՝ նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած տրանսպորտային միջոցներով:

2. Մարտունի(Ա/Կ) – Գեղիովիտ – Մարտունի թիվ 26 ներմարզային ավտոբուսային երթուղին սպասարկող ՊԱԶ-672Մ մակնիշի 260ՍՍ16 պետհամարանիշի /10-48Լ դեղին հիմնագույնի համարանիշ/ 1986 թվականի արտադրության ավտոբուսը տեխնիկապես անսարք լինելու պատճառով հանել երթուղու սպասարկումից, որի փոխարեն երթուղու սպասարկման գործում ներգրավել ՊԱԶ-32054 մակնիշի 34FU912 պետհամարանիշի 2005 թվականի արտադրության ավտոբուսը:

<b>Տրանսպորտային միջոցի</b>					
<b>№</b>	<b>մակնիշը</b>	<b>հ/հ</b>	<b>դ/հ</b>	<b>թ/տ</b>	<b>վարորդի անունը, ազգանունը</b>
1	ՊԱԶ-32054	34FU912	-	2005	Սարգսյան Կարեն

3. Գավառ(Ա/Կ) – Կարմիրգյուղ – Գավառ թիվ 6, Մարտունի(Ա/Կ) – Ձորագյուղ – Մարտունի թիվ 30 և Մարտունի(Ա/Կ) – Երանոս – Մարտունի թիվ 31 ներմարզային ավտոբուսային երթուղիները հայտարարել թափուր:

Հիմք՝ մրցութային հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 30-ի մրցութային թերթիկները 5 թերթից, մրցութային ամփոփիչ թերթիկը 1 թերթից, <<Գավառուրանս>> ՍՊԸ և <<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲԸ տնօրենների գրույթումները:

4. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի  
Նախագահ՝

*Կ. Կապր*

Քարտուղար՝

*[Signature]*

Կ. Հակոբյան

Անդամներ՝

*[Signature]*

Գ. Խաչատրյան

*[Signature]*

Կ. Բաղդասարյան

*[Signature]*

Գ. Գրիգորյան

Լ. Գևորգյան